

Եւ իբրեւ հատաւ քաղաքի եկեղեցոյն խաղնան եւ վանօրէիցն եւ ինքն սկսաւ չքաւորել, զի էր յոյժ անատակ¹⁰ եւ վայրապար, ունէր մարդիկ աշխարհականք եւ կարգաւորք, Ի, Լ պահէր պէտավի ձիան, կառս մեծագինս եւ տաճիկ ձեանս. եւ ինքն յազանէր բեհեզս եւ ծիրանիս, մախմուր եւ աթլազ, ներքեւանց սամուր մորթի կամ վաչախ. գաւազանն՝ բունն արծաթի, նաեւ սնտուխչան, կաղմարն, ջրլուացքն, իպրիխն եւ ամէն անօթքն եւ կահքն զուար սոկէօջրած արծաթէ. վասն որոյ ի սպառ ջնջեալ կորոյս զամենայն ինչ եւ զմեզ:

Գարձեալ խորհեցաւ խորհուրդ չար վասն Հայոց եւ ասէ. Գնամ ես առ մեծն Փափ եւ հանեմ էմբէր եւ Ֆէթվանի, որ յերկրէս Լէհու ուր եւ կան Հայք՝ հնազանդին ինձ եւ Փափին զապի լինին. ապա թէ ոչ արտաքսեացին եւ վտարեացին յերկրէն Լէհու, զի հերձուածողք են: Եւ ելեալ զնաց իւրովքն: Իսկ եղկելի Հայք տարակուսի եղեալ եւ ի մեծ սուգ անկեալ՝ ապաւինեցան ի սուրբ Աստուածածին Կոյսն Մարիամ եւ ի միածին Որդին, բարեխօս ունելով զսուրբ Հայրն եւ Լուսաւորիչն Գրիգորիոս...:

Եւ մինչ մեք յայսմ տարակուսանաց եւ արտամութեան էաք, եկն եհասնորապսակ արքայն բազում հեծելօք եւ սպառազինօք ի քաղաքն Լով: Որ զնայր ի վերայ յԱպաղին եւ

¹⁰ անաթակ: